Վահե
ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է: Հեղինակ է շուրջ 35 գիտական աշխատանքների:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ COVID-19-Ի ԹԻՐԱԽՈՒՄ

Հիմնաբառեր. *ճգնաժամ, տնտեսական անվտանգություն, արտակարգ իրավիճակ, ՀՆԱ կորուստ*

Հոդվածում անդրադարձ է կատարվել համաշխարհային տնտեսության վրա COVID-19-ի տարածման ազդեցության խնդիրներին: Մասնավորապես՝ գնահատվել և կանխատեսվել է տարբեր սցենարների ազդեցությունը մակրոտնտեսական արդյունքների և ֆինանսական շուկաների վրա՝ գլոբալ հիբրիդային DSGE/CGE ընդհանուր հավասարակշռության մոդելի օրինակով: Ներկայացվել են ՀՀ ազգային և տնտեսական անվտանգության ապահովման նպատակով իրականացվելիք անհրաժեշտ հրատապ միջոցառումները (առողջապահության ենթակառուցվածքների զարգացում, պարենային ինքնաբավության ապահովում):

Ամբողջ աշխարհում կորոնավիրուսի համավարակի հետ կապված իրադարձությունները վկայեցին, որ տասնամյակներ շարունակ տեղի ունեցող «վայրի գլոբալացման» գործընթացը գոնե որոշ ժամանակ կդադարի, և պետություններն ու ժողովուրդները ժամանակ կունենան վերաիմաստավորելու իրենց ազգային նկարագիրը և գնահատելու իրենց տնտեսական կարողությունները: Գաղտնիք չէ, որ COVID-19-ը մեծ հարված հասցրեց երկրների տնտեսություններին, և կարծես թե՝ «ստիպում է», որ յուրաքանչյուրը մտորի և դասեր քաղի այս ճգնաժամից:

Իհարկե, հիմնական հարցը հետևյալն է. որքա՞ն ժամանակ կտևի համավարակը: Ամենայն հավանականությամբ, դա կավարտվի այն պահին, երբ կստեղծվի պատվաստանյութ, լավատեսական սցենարով՝ մինչև տարեվերջ: Իրավիճակը կարող է նաև կարգավորվել,

եթե կանխվի վարակի տարածումը: Չինաստանին հաջողվեց հասնել դրան մոտ երեք ամսվա ընթացքում: Ամենայն հավանականությամբ, արևմտյան զարգացած, ինչպես նաև զարգացող երկրները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, չեն կարողանա դադարեցնել վարակի տարածումը նման ժամկետներում, քանի որ այդ երկրներում անհատի ազատությունները սահմանափակելու ունակությունները շատ ավելի ցածր մակարդակի վրա են: Այսինքն՝ կարելի է համոզմունք հայտնել, որ տրված ժամանակահատվածի միջակայքը երեքից ինն ամիս է, և հնարավոր է կանխատեսել նորմալացում 3 + X ամիս հետո, որտեղ X-ը վարակված մարդկանց համար արդյունավետ մեկուսացում ապահովելու ունակությունն է:

Յուրաքանչյուր տնտեսական ճգնաժամ ունի զարգացման մի քանի սցենարներ, որոնց զարգացման կորերն արտահայտվում են լատինական տառերի տեսքով՝ V, U, L և W:

V-աձև ուղին, կարելի է ասել, տնտեսության համար ամենադյուրինն է՝ խոր անկմանը հաջորդում է կտրուկ վերականգնում: Այսպիսի սցենար կանխատեսվում է Չինաստանի, Սինգապուրի, Հարավային Կորեայի տնտեսությունների համար:

U-աձև տարբերակը ենթադրում է տնտեսության արագ անկում, ապա դրա դանդաղ շարժ «հատակի» մասում (ռեցեսիա), և միայն դրանից հետո է սկսվում վերելքը: Այսպիսի սցենարի դեպքում տնտեսության առջև ծառացած խնդիրների լուծումը երկարաձգվում է, իսկ կրած վնասները՝ բազմապատկվում: Նման կանխատեսում է արվում ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների համար: Զարգացող երկրների համար այն անմիջականորեն կարող է թիրախավորել երկրի տնտեսական անվտանգությունը (հիմնականում՝ տնտեսության իրական հատվածի):

L-աձև սցենարը ենթադրում է տնտեսության կտրուկ անկում՝ հետագայում երկարաժամկետ ստագնացիայի կանխատեսմամբ (այսպես եղել է «Մեծ ճգնաժամի» տարիներին): Հիմնականում ճգնաժամից տուժում է տնտեսության ծառայությունների ոլորտը՝ զբոսաշրջություն, տրանսպորտային ծառայություններ, ռեստորանային բիզնես և այլն: Այսպիսի ճգնաժամի մեջ հայտված ոլորտները երկար ժամանակ չեն կարողանում վերականգնել կրած վնասները: Սակայն, ճգնաժամի նման զարգացումն անմիջականորեն չի կարող լուրջ սպառնալիք հանդիսանալ երկրի տնտեսական անվտանգությանը:

W-աձև տարբերակը, կարծես թե, U–աձև տարբերակի «կրկնվողն» է: Այսինքն՝ տնտեսության անկմանը հաջորդում է վերելք, այնուհետև՝ նորից կտրուկ անկում, և միայն դրանից հետո տնտեսությունը վերջնականապես առողջանում է: Նման սցենարը նույնպես զարգացող երկրների տնտեսական անվտանգության համար մեծ սպառնալիք է:

COVID-19-ի տնտեսական հետևանքները գնահատելու և կանխատեսելու նպատակով կարելի է օգտագործել Լիի և Մակկիբինի (2003 թ.)[1] և հետագայում՝ Մակկիբինի և Սիդորենկոյի վերամշակած մոդելը (2006 թ.)[2], որն ուսումնասիրում է տարբեր սցենարների ազդեցությունը մակրոտնտեսական արդյունքների և ֆինանսական շուկաների վրա՝ գլոբալ հիբրիդային DSGE/CGE ընդհանուր հավասարակշռության մոդելի մեջ: Համաձայն այսպիսի մոտեցման՝ համաշխարհային տնտեսության վրա COVID-19-ի ազդեցությունը գնահատելու համար ուսումնասիրվում է 7 սցենար՝ S1, S2, S3, S4, S5, S6, S7[3]: Մենք կանդրադառնանք դրանցից չորսին՝ S4-S7 (աղյուսակ 1):

Նշված սցենարների հիման վրա կարելի է ներկայացնել G-20 երկրների ՀՆԱ կանխատեսվող կորուստները 2020 թվականին (գծապատկեր 1):

[1] Jong-Wha Lee, Warwick J. McKibbin, Globalization and Disease: The Case of SARS. 2004.
[2] Warwick J McKibbin, Alexandra A. Sidorenko, Global Macroeconomic Consequences of Pandemic Influenza. 2006.
[3] Warwick McKibbin, Roshen Fernando, The Global Macroeconomic Impacts of COVID-19: Seven Scenarios. 2 March, 2020.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

COVID-19-ի զարգացման սցենարներ[4]

Սցենար	Օրական վարակվածների քանակը (%)	Օրական մահացածների քանակը (%)	Մահացածների քանակը երկրի ընդհանուր բնակչության մեջ (%)
S4	10	2,0	0,20
S5	20	2,5	0,50
S6	30	3,0	0,90
S7*	10	2,0	0,20

** Այս սցենարը նույնն է, ինչ S4-ը, միայն այն տարբերությամբ, որ կանխատեսվում է թեթև համաճարակ ամեն տարի՝ անորոշ ժամանակով:*



	JPN	DEU	EUZ	USA	ITA	BRA	FRA	RUS	AUS	CAN	ZAF	CHI	GBR	ARG	KOR	TUR	IND	INO	MEX	SAU
S4	-2.5	-2.2	-2.1	-2.0	-2.1	-2.1	-2.0	-2.0	-2.1	-1.8	-1.8	-1.6	-1.5	-1.6	-1.4	-1.4	-1.4	-1.3	-0.9	-0.7
S5	-5.7	-5.0	-4.8	-4.8	-4.8	-4.7	-4.6	-4.6	-4.6	-4.1	-4.0	-3.6	-3.5	-3.5	-3.3	-3.2	-3.1	-2.8	-2.2	-1.4
S6	-9.9	-8.7	-8.4	-8.4	-8.3	-8.0	-8.0	-8.0	-7.9	-7.1	-7.0	-7.2	-6.0	-6.2	-5.8	-5.5	-5.3	-4.7	-3.8	-2.4
S7	-2.0	-1.7	-1.9	-1.5	-2.2	-1.9	-1.5	-1.9	-2.0	-1.6	-1.5	-1.7	-1.2	-2.2	-1.3	-1.2	-1.3	-1.3	-0.9	-1.3

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

COVID-19-ի հետևանքով G-20 երկրների ՀՆԱ կանխատեսվող կորուստները 2020 թվականին (%)[5]

Գծապատկեր 2-ում ներկայացված են այդ կորուստները՝ գումարային տեսքով:

Այսինքն՝ ամենալավագույն սցենարի դեպքում (S4) միայն G-20 երկրներում 2020 թ. ՀՆԱ կորուստը կկազմի մոտ 1,902 միլիարդ ԱՄՆ դոլար:

COVID-19-ի զարգացման ներկայացված հնարավոր սցենարներին համապատասխանում է տնտեսական ճգնաժամի հավանական զարգացման համապատասխան սցենարը (աղյուսակ 2):

31.03.2020-ի դրությամբ, մեր հանրապետությունում COVID-19-ի տարածման տեմպերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իրադրությունը համապատասխանում է S4 սցենարին (օրական վարակվածների քանակը միջինում մոտ 10% է): Այսինքն՝ կարելի է կանխատեսել ՀՆԱ մինչև 3% կորուստ:

Ներկայումս աշխարհում տեղի ունեցող գործընթացների տրամաբանությունը վերլուծելով՝ կարելի է վստահաբար պնդել, որ ճգնաժամի հաղթահարումից հետո ձևավորվելու է նոր աշխարհակարգ՝ իր նոր

[4] Warwick McKibbin, Roshen Fernando, The Global Macroeconomic Impacts of COVID-19: Seven Scenarios. 2 March, 2020.

[5] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից: Աղբյուրը՝ Warwick McKibbin, Roshen Fernando. The Global Macroeconomic Impacts of COVID-19: Seven Scenarios. 2 March, 2020.



	JPN	DEU	EUZ	USA	ITA	BRA	FRA	RUS	AUS	CAN	ZAF	CHI	GBR	ARG	KOR	TUR	IND	INO	MEX	SAU
S4	140	99	111	420	54	72	63	84	27	32	14	426	48	15	31	33	152	45	24	12
S5	318	225	256	1004	123	161	144	191	60	74	33	946	108	133	71	75	334	99	57	24
S6	549	390	446	1769	214	275	250	331	103	128	57	1618	187	56	124	130	567	167	98	40
S7	113	78	101	314	56	65	46	81	27	28	12	560	39	11	29	30	142	46	24	22

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

COVID-19-ի հետևանքով G-20 երկրների ՀՆԱ կանխատեսվող կորուստները 2020 թվականին (միլիարդ ԱՄՆ դոլար)

ԱՂՅՈՒՍԱԿ 2

COVID-19-ը և տնտեսական ճգնաժամի զարգացման սցենարները

COVID-19 զարգացման հնարավոր սցենարը	*Տնտեսական ճգնաժամի հավանական զարգացման սցենարը*
S4	**V-աձև**
S5	**U-աձև**
S6	**L-աձև**
S7	**W-աձև**

կանոններով, որտեղ գերիշխողի և թելադրողի դերում հանդես են գալու այն երկրները, որոնք շատ արագորեն կկարողանան չեզոքացնել արտաքին սպառնալիքները՝ արտակարգ իրավիճակներում ապահովելով երկրի բնականոն կյանքը: Այդպիսի հասարակարգում կգոյատևեն այն երկրները և ազգերը, որոնք դասեր կքաղեն ստեղծված իրավիճակից և իրենց ազգային ու տնտեսական անվտանգության ռազմավարությունն իրականացնելիս զերծ կմնան ամբոխավարական քայլերից: Ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, պետք է անհապաղ որոշակի թիրախավորված քայլեր իրականացնել առողջապահության ենթակառուցվածքների արդիականացման ու զարգացման նպատակով, (մասնավորապես՝ արտակարգ դրության պայմաններում օգտագործվող անհրաժեշտ սարքավորումների և պարագաների տեղական արտադրության կազմակերպում): Տնտեսական անվտանգության պարագայում, նախևառաջ, առաջնային պետք է դառնա պարենային ինքնաբավության ապահովման խնդիրը (90%): Մեր կարծիքով, բավարար պայման չէ գյուղատնտեսության ոլորտը խթանելու նպատակով արտոնյալ կամ զրոյական տոկոսա-

դրույքով վարկերի տրամադրումը: Անհրաժեշտ է, որ այդ միջոցներն ուղղվեն պարենային ինքնաբավությունն ապահովող կոնկրետ ենթաճյուղերի: Այդ նպատակով կառավարությունը կարող է վարել (մինչև 3 տարի) «կոշտ» և հետևողական քաղաքականություն գյուղատնտեսության ոլորտում:

Եզրափակելով նշենք, որ յուրաքանչյուր համակարգում ճգնաժամի պատճառ կարող են դառնալ ներքին և արտաքին սպառնալիքները: ՀՀ-ում վերջին քաղաքական իրադարձություններից հետո ազգային ու տնտեսական անվտանգության ներքին սպառնալիքները, կարծես թե, աստիճանաբար չեզոքացվում են: Այս տեսանկյունից, համակարգը (երկիրը) ձեռք է բերել կայունություն և ինքնակազմակերպման մեծ ներուժ: Խնդիրն այն է, որ ինքնակազմակերպման այդ հզոր ներուժը (էներգիան) ճիշտ կառավարվի օրեցօր աճող արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար: Արդեն այսօր անհրաժեշտ է բացահայտել ՀՀ ազգային անվտանգության և դրա հիմնական բաղկացուցչի՝ տնտեսական անվտանգության հիմնական արտաքին սպառնալիքները մոտ ապագայում, թիրախավորել դրանք՝ որոշակի քայլեր ձեռնարկելով դրանց ազդեցության նվազեցման և չեզոքացման ուղղությամբ:

Հ.Գ. Տարբեր երկրներ կիրառում են տընտեսական անվտանգության տարբեր մոտեցումներ և մոդելներ: ՀՀ տնտեսական անվտանգության ռազմավարության հիմքում անհրաժեշտ է ներմուծել.

- ***Աղետների տեսության դրույթները (Է. Լասլո), որտեղ շեշտը դրվում է գլոբալ աղետների հնարավորության և դրանց հետևանքով առաջացած ճգնաժամերի հաղթահարման հիմնախնդիրների վրա:***
- ***Համակարգի ինքնակարգավորման և ինքնակազմակերպման տեսության դրույթները (Թ. Պարսոնս, Ի. Պրիգոժին, Գ. Հակեն), որոնց համաձայն՝ ճգնաժամը հաղթահարելու հարցում շեշտադրվում են համակարգերի (տվյալ դեպքում՝ տնտեսության) ներքին կարողությունն ու ինքնակազմակերպման ներուժը:***

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jong-Wha Lee, Warwick J. McKibbin. Globalization and Disease: The Case of SARS, 2004.
2. Warwick J McKibbin, Alexandra A. Sidorenko. Global Macroeconomic Consequences of Pandemic Influenza, 2006.
3. Warwick McKibbin, Roshen Fernando. The Global Macroeconomic Impacts of COVID-19: Seven Scenarios. 2 March, 2020.

Ваге БУЛАНИКЯН
Старший исследователь исследовательского центра АГЭУ «Амберд», кандидат экономических наук, доцент

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ В КОНТЕКСТЕ COVID-19

В статье рассматриваются вопросы влияния COVID-19 на мировую экономику. В частности, влияние различных сценариев на макроэкономические результаты и финансовые рынки оцениваются и прогнозируются с использованием глобальной гибридной модели равновесия DSGE / CGE. Также представлены неотложные меры, необходимые для обеспечения национальной и экономической безопасности Республики Армения (развитие инфраструкту¬ры здравохранения, продовольственная самообеспеченность).

Ключевые слова: *кризис, экономическая безопасность, чрезвычайная ситуация, потеря ВВП*

Vahe BULANIKYAN
Senior Researcher at AMBERD Research Center, ASUE, PhD in Economics

ECONOMIC SECURITY IN THE COVID-19 GOAL

The article discusses the impact of COVID-19 on the global economy. In particular, the impact of various scenarios on macroeconomic results and financial markets is assessed and predicted using the DSGE / CGE global hybrid equilibrium model. The urgent measures necessary to ensure the national and economic security of the Republic of Armenia (development of health infrastructure, food self-sufficiency) were presented. The urgent measures are necessary to ensure the national and economic security of the Republic of Armenia (development of health infrastructure, food self-sufficiency) were presented.

Key words: *crisis, economic security, emergency, loss of GDP*